ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2024 թվականի թիվ 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 25-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 589-Ն որոշման պահանջները՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու նպատակով հանձնարարել.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

1) 2024 թվականի ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով 2024 թվականի ապրիլի 29-ից մինչև 2024 թվականի հուլիսի 31-ը ներառյալ հաստատված գրաֆիկով՝ ապահովելով նախատեսված թվաքանակը,

2) ժամկետային զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը.

1) ապահովել զորակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում,

2) ապահովել մարզի տարածքում և մարզի տարածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամասեր,

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին փոխադրող ավտոբուսներին ուղեկցելու համար զորակոչային տեղամասերին կցել պարեկային ծառայության և ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 2 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումների հայտով զինակոչիկների ֆլյուորո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում և կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո /ռենտգեն/ ժապավեններով և երևակման նյութերով:

4. Մարզի համայնքների և կազմակերպությունների /անկախ կազմակերպական և իրավական ձևերից/ ղեկավարներին.

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին,

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումներ:

5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել զորակոչի ընթացքում ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ինձ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-05-02 12:19:02 GMT+4
Հաստատված է EKENG-ի կողմից

mID

ք. Իջևան
30 ապրիլի 2024թ.